

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

#### ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՌԱՋԱՅԱԾ

#### ԱՊԱՌՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության համայնքերի վարչական սահմաններում գտնվող /հաշվառված/ գույքի և հողամասերի համար 2011 թվականի հունվարի 1-ին նախորդող հաշվետու ժամանակաշրջանների գույքահարկի և հողի հարկի վճարման պարտականություն ունեցող անձանց վրա:

**Հոդված 2.** Գույքահարկ և հողի հարկ վճարող անձինք ազատվում են իրենց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի 2008 թվականի հունվարի 1-ին նախորդող հաշվետու ժամանակաշրջանների համար սույն օրենքն ուժի մեջ մտնելու դրությամբ չվճարված գույքահարկից և հողի հարկից, ինչպես նաև այդ պարտավորությունները սահմանված ժամկետներում չվճարելու համար հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժերից և տուգանքներից: Սույն հոդվածում նշված գույքահարկի և հողի հարկի պարտավորությունները տեղեկատվական ավտոմատացված համակարգերից դուրս գրելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**Հոդված 3.** 2008 թվականի հունվարի 1-ից մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար համայնքների վարչական սահմաններում գտնվող /հաշվառված/ գույքահարկի և հողի հարկի գումարները մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ վճարած ֆիզիկական անձինք ազատվում են գույքահարկը և հողի հարկը սահմանված ժամկետներում չվճարելու համար 2008 թվականի հունվարի 1-ից մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած հաշվետու ժամանակաշրջանների մասով հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից, եթե սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ (ներառյալ մինչև 2008 թվականի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածի համար) շինությունների համար չվճարված գույքահարկը կամ հողամասերի համար չվճարված հողի հարկը և դրանց մասով հաշվարկված տույժերը չեն գերազանցում 1 մլն. ՀՀ դրամը, իսկ փոխադրամիջոցների համար՝ չեն գերազանցում 0,5 մլ. ՀՀ դրամը:

**Հոդված 4.** Սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված ժամկետը չի տարածվում գույքահարկի և հողի հարկի վճարման պարտավորություն ունեցող այն ֆիզիկական անձանց վրա, ովքեր մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ գույքահարկի և հողի հարկի չվճարված գումարների վճարումն ապահովելու նպատակով իրենց հաշվառող մարմինների հետ կնքել են

ժամանակացույց, ըստ պարտավորությունների ծավալների / ներառյալ տույժերը/ հետևյալ ժամկետներով՝

1. մինչև երեք հարյուր հազար ՀՀ դրամի դեպքում՝ 3 ամիս ժամկետով.

2. երեք հարյուր հազար ՀՀ դրամից մինչև մեկ միլիոն ՀՀ դրամի դեպքում՝ 6 ամիս ժամկետով.

3. մեկ միլիոն ՀՀ դրամը գերազանցող պարտավորության դեպքում՝ մեկ տարի ժամկետով:

Սույն հոդվածում նշված ժամանակացույցի ժամկետների հաշվարկը սկսվում է 2013 թվականի հունվարի 1-ից:

Սույն հոդվածում նշված ժամանակացույցը կազմվում է ըստ եռամսյակների, վճարման ենթակա գումարի /առանց տույժերի/ համամասնական բաշխումով, եռամսյա վճարումների պարտադիր կատարման պայմանով: Սույն հոդվածով սահմանված կարգով կնքված ժամանակացույցով նախատեսված եռամսյակի ավարտից մեկ ամիս ուշացնելու կամ չկատարելու դեպքում գույքահարկի և հողի հարկի չվճարված գումարները և դրանց չվճարման համար հաշվարկված տույժերը գանձվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված ընդհանուր կարգով:

**Հոդված 5.** Այն գույքահարկ և հողի հարկ վճարող ֆիզիկական անձինք, որոնք մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը փաստացի կատարել են 2008 թվականի հունվարի 1-ից մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար համայնքների վարչական սահմաններում գտնվող /հաշվառված/ գույքահարկի և հողի հարկի գումարների վճարումները, սակայն ունեն դրանց մասով հաշվարկված և չվճարված տույժեր, սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ազատվում են չվճարված տույժերը վճարելուց:

**Հոդված 6.** 2011 թվականին նախորդող երեք տարիներին վերաբերող ֆիզիկական անձանց կողմից գույքահարկի և հողի հարկի վճարած տույժերի գումարները հաշվանցվում են հարկ վճարողների՝ գույքահարկի և հողի հարկի գծով ընթացիկ կամ առաջիկա վճարումների հաշվին:

**Հոդված 7.** Սույն օրենքով տրամադրվող գույքահարկի և հողի հարկի վճարման պարտավորության դադարեցման հետևանքով համայնքների կողմից չստացված գումարները փոխհատուցման ենթակա չեն «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

**Հոդված 8.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

‘Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին’, ‘Հարկերի մասին’ ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին, ‘Հողի հարկի մասին’ ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին, ‘Գույքահարկի մասին’ ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին **ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ**

N	Առարկության, առաջարկության հեղինակը (առարկության, առաջարկության ստացման ամսաթիվը)	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1.	ՀՀԿ խմբակցություն	Սոցիալական տարբերակումը ավելի հստակեցնելու նպատակով առաջարկվել է նվազեցնել արտոնության տարածման համար նախատեսված ապառքների չափի վերին շեմերը հողամասերի ու շինությունների հարկի համար մինչև 1.0 մլն դրամ, իսկ փոխադրամիջոցների համար՝ մինչև 0.5 մլն դրամ:	Ընդունվել է, ‘Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին’ օրենքի նախագծում, 3-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:
2.	ՀՀԿ խմբակցություն	2008 թվականի հունվարի մեկից մինչև 2011 թվականի հունվարի մեկը ընկած ժամանակապատվածի համար արտոնությունները կիրառել միայն այն հարկատուների համար, ում հարկային պարտավորությունները 1996 թվականից մինչև 2012 թվականի 2012 թվականի հունվարի մեկի դրությամբ չեն գերազանցի 1.0 մլն դրամը՝ շինությունների ու հողի հարկի գծով, և 0.5 մլն դրամը՝ փոխադրամիջոցների գծով:	Ընդունվել է, ‘Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին’ օրենքի նախագծում, 3-րդ հոդվածում կատարվել է լրացում, ավելացվել են ‘Ներառյալ մինչև 2008 թվականի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածի համար’ բառերը:
3.	ՀՀԿ խմբակցություն	2008 թվականի հունվարի մեկից մինչև 2011 թվականի հունվարի մեկը ընկած ժամանակապատվածի համար արտոնությունները կիրառել միայն հարկատու ֆիզիկական անձանց նկատմամբ (իրավաբանական անձանց նկատմամբ արտոնությունը չկիրառել):	Ընդունվել է, ‘Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին’ օրենքի նախագծում, 3-րդ, 4-րդ, 6-րդ

			հողվածներում կատարվել է փոփոխություն, համապատասխան տեղերում ավելացվել է 'ֆիզիկական անձիք' բառակապակցությունը:
4.	ՀՀ կառավարություն	Հողի հարկի մասով նախատեսել ավագանու կողմից համայնքի բյուջեյի 10% շրջանակում արտոնություններ սահմանելու իրավասություն, ինչպես որ առկա է գույքահարկի պարագայում::	Ընդունվել է. 'Հողի հարկի մասին' ՀՀ օրենքի նախագծում ավելացվել է համապատասխան հողված, նման 'Գույքահարկի մասին' ՀՀ օրենքով ամրագրված դրույթին:
5.	Հայ Յեղափոխական դաշնակցության պատգամավորական խմբակցություն	'Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին' նախագծի հողված 2-ում առաջարկվող արտոնությունը տարածել ավելի մեծ ժամանակահատվածի վրա՝ 2008 թվականի հունվարի 1-ին բառերը փոխարինել 2012 թվականի հունվարի 1-ին բառերով, ինչպես նաև համապատասխան խմբագրում կատարել ամբողջ օրինագծում:	Չի ընդունվել. 2008 թվականի հունվարի 1-ի ժամկետը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատական պրակտիկայում հատկապես այս ժամկետից առաջ ընկած պարտավորությունների մասով դատական հայցեր չեն ընդունվում՝ վաղեմության ժամկետի հիմնավորումով: Այս հանգամանքով է պայմանավորված հողված 2-ի անհրաժեշտությունը ու տրամաբանությունը: Հաջորդող տարիների համար արձանագրվել են բարձր հավաքագրման ցուցանիշներ, և այդ տարիների համար առկա են հարկային արդյունավետ վարչարարության

			<p>օրենքով նախատեսված հնարավորություններ:</p>
<p>6.</p>	<p>Հայ Յեղափոխական դաշնակցության պատգամավորական խմբակցություն</p>	<p>‘Հողի հարկի մասին’ ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին, ‘Գույքահարկի մասին’ ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծերով ներկայացված <i>դաս դարի</i> բառերը փոխարինել <i>երեք դարի</i> բառերով:</p>	<p>Չի ընդունվել. Վաղեմության ժամկետի հետ կապված փոփոխություն է առաջարկվել նաև ‘Հարկերի մասին’ ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծով, մասնավորապես 30.1 հոդվածի 1-ին մասում առաջարկվող փոփոխությամբ հոդվածի դրույթները չեն տարածվի հողի հարկի և գույքահարկի վրա, որպեսզի չառաջանան հարկերը չվճարելու և հետագայում պատասխանատվությունից խուսափելու սպասումներ ու հնարավորություններ: Այս համատեքստում է, որ վաղեմության ժամկետը մեծացվել է և հստակ սահմանվել 10 տարի: Հարկ է նշել, որ հատկապես գույքահարկի ու հողի հարկի պարագայում միջազգային պրակտիկայում ընդունված է նաև ընդհանրապես վաղեմության ժամկետ չսահմանելու պրակտիկան:</p>

7.	Գալուստ Սահակյան ՀՀԿ	Առաջարկվել են մի շարք խմբագրական փոփոխություններ:	Ընդունվել են:
----	----------------------	---	---------------